

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր ծննդյան 60-ամյակի և կառավարական բարձր շքանշանով պարգևատրվելու առթիվ: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և նորանոր հաջողություններ՝ հայրենասիրական և խաղաղության պաշտպանության ու ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման շնորհակալ գործունեության բնագավառում:

Հարգանքներով՝

ԲԱԴԱԼ. ՍՈՒՐԱԴՅԱՆ
ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ

Երևան,
20 սեպտեմբերի 1968 թ.

* * *

Ձեր ծննդյան 60-ամյակի և կառավարական բարձր պարգևի՝ «Պատվո նշան» շքանշանով պարգևատրման առթիվ սրտագին ողջունում ենք Ձեզ, ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի և անձամբ մեր անունից:

Խաղաղության պաշտպանության օգտին կատարած Ձեր հայրենասիրական մեծ գործունեությամբ Դուք ձեռք եք բերել լայն ճանաչում ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում՝ Ձեր ժողովրդի և բարի կամեցողության մարդկանց շրջանակներում:

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և հաջողություններ՝ ժողովուրդների միջև խաղաղության և բարեկամության ամրապնդման գործում:

Վ. ԿՈՒՐՈՅԵԴՈՎ
ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ

Մոսկվա,
19 սեպտեմբերի 1968 թ.

*
* *

Ընդունեցեք մեր շնորհավորանքները Ձեր ծննդյան 60-ամյակի առիթով: Ցանկանում ենք Ձեզ երկար տարիների առողջություն և հաջողություն՝ ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման գործին ի նպաստ Ձեր անխոնջ աշխատանքների համար:

ՆԻԿՈԼԱՅ ՏԻԽՈՆՈՎ
ՄԻԽԱԻԼ ԿՈՏՈՎ
Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի նախագահություն

Մոսկվա,
20 սեպտեմբերի 1968 թ.

*
* *

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր ծննդյան 60-ամյակի և կառավարական բարձր շքանշանով պագևատրվելու առթիվ:

Մաղթում եմ Ձեզ երկար տարիների քաջառողջություն և հետագա բեղմնավոր գործունեություն՝ Ձեր հայրենասիրական և խաղաղության պաշտպանության ի նպաստ տարած անխոնջ աշխատանքներում:

Կ. ԴԱՎԼԱԲՅԱՆ
Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

Երևան,
20 սեպտեմբերի 1968 թ.